1000 խոշոր հարկատուների կողմից 2020թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի վերլուծություն

2020թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է շուրջ 721 մլրդ դրամ, ինչը 9.4%-ով պակաս է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից, սակայն շուրջ 47 մլրդ դրամով գերազանցում է 2018թ. մակարդակը (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Հունվար-հունիս ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

2020թ. առաջին 9 ամիսներին, նախորդ երկու տարիների նույն ժամանակահատվածի համեմատությամբ, նվազել է նաև 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը: Այսպես, 2020-ի հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում 10 խոշորագույն հարկատուները պետական բյուջե են վճարել մոտ 188 մլրդ դրամ հարկ, ինչը նախորդ տարվա համեմատությամբ պակաս է 2 մլրդ դրամով կամ 12.6%-ով (գծապատկեր 2): 100 խոշոր հարկատուները, 2019թ. համեմատ, վճարել են 34 մլրդ դրամով պակաս հարկ:



Գծապատկեր 2. Հունվար-սեպտեմբեր ամիսներին 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

Որոշակի նվազում է արձանագրել նաև 1000 խոշորագույն հարկատուների ցանկի վերջնամասում տեղ զբաղեցնող ընկերությունների կողմից վճարված հարկերի մեծությունը: Այսպես, ցանկի վերջին հարյուրյակում գտնվող հարկատուների վճարումները 2020թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին կազմել է 12 մլրդ դրամ՝ 2019-ի 12,8 մլրդ դրամի փոխարեն (գծապատկեր 3): Այնուհանդերձ, 2018թ. համեմատությամբ 2020-ի առաջին 9 ամիսների հավաքագրումը զգալիորեն բարձր է:



Գծապատկեր 3. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 փոքրագույն հարկատուների կողմից հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

Հատկանշական է, որ 1000 հարկատուների ցանկում վերջին տեղերը զբաղեցնող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության նվազումը գրանցել է գրեթե նույն տեմպը, քան խոշորների վճարած հարկերինը: Այսպես, 100

խոշորագույն հարկատուները 2020թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, վճարել են 7,3%-ով ավելի քիչ հարկ, իսկ 1000 խոշորագույն հարկատուների ցանկի վերջին հարյուրակի պարագայում նույն ցուցանիշը կազմել է 7,4%:

1000 հարկատուների ցանկում առաջին և վերջին 100-յակի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության հարաբերակցությունը 2020թ. առաջին 9 ամիսների համար կազմել է 36 անգամ, նախորդ տարի՝ 37 անգամ, 2018-ին՝ 40 անգամ: Առաջին և վերջին տասնյակի հարկատուների վճարած հարկերի հարաբերակցությունը 2020-ին 163 անգամ է, ինչը ավելին է, քան նախորդ տարվա հարաբերակցությունը, սակայն պակաս է 2017 և 2018 թվականների մակարդակից (գծապատկեր 4): Սա վկայում է 1000 հարկատուների ցանկում ստորին հորիզոնականներ զբաղեցնող ընկերությունների տնտեսական ակտիվության ավելի դանդաղ կրճատման մասին:



Գծապատկեր 4. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 խոշորագույն և փոքրագույն հարկատուների կողմից հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի հարաբերակցությունը, անգամ

2020թ. հունվար-սեպտեմբեր ամիսների արդյունքներով ՀՀ-ում գործող 130 ընկերություն վճարել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր: 2019-ին այդպիսի ընկերությունների թիվը 7-ով ավելի էր, սակայն 2018-ին և 2017-ին՝ անհամեմատ պակաս:

Միևնույն ժամանակ, 500 մլն դրամիվ ավելի հարկ վճարած ընկերությունների թիվը 2020-ի հունվար-սեպտեմբեր ամիսների արդյունքներով 257 է կամ նախորդ տարվա

համեմատությամբ նույնիսկ 1-ով ավելի: Ավելորդ չէ ընդգծել, որ այս մակարդակն անհամեմատելի է՝ 2017 և 2018 թվականների մակարդակների հետ: 2

Հետաքրքրական է, որ 2017թ. առաջին երեք ամիսների արդյունքներով, 1000 հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների 167-ը վճարել է 100 մլն դրամից պակաս հարկ: 2018-ին այդպիսի ընկերությունների թիվը արդեն 14 էր, իսկ 2019-ին, նաև՝ 2020թ. ցանկում ընդհանրապես այդպիսի ընկերություն չկար (գծ. 5): Ավելին, 2020թ. հաշվետու ժամանակահատվածում 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառվելու համար պետք էր վճարել առնվազն 115 մլն դրամի հարկ, 2019-ին՝ 119 մլն դրամ, 2018-ին՝ 98 մլն դրամից մի փոքր ավելի, իսկ 2017-ին՝ դրա համար բավարար կլիներ ընդամենը 80 մլն դրամի չափով հարկային պարտավորության կատարումը:



Գծապատկեր 5. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված հարկատուների թվաքանակը՝ ըստ հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի մեծության

2020-ի հունվար-սեպտեմբեր ամիսների արդյունքներով, ՀՀ-ում 192 ընկերության պարագայում շահութահարկի վճարումը գերազանցել է 100 մլն դրամը, մինչդեռ նախորդ տարի այդպիսի ընկերությունների թիվը 33-ով շատ էր: Միևնույն ժամանակ եկամտային հարկի պարագայում նույն շեմը գերազանցած ընկերությունների թիվը 2019-ի համեմատությամբ չի փոխվել՝ կազմելով 298 միավոր: Սա նշանակում է, որ ընթացիկ տարում տնտեսական ակտիվության զսպմանը նպաստած ճգնաժամային դրսևորումները ավելի մեծ ռիսկեր են պարունակում շահութահարկի, քան եկամտային հարկի բազայի կրճատման համար (գծապատկեր 6):



Գծապատկեր 6. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված շահութահարկի և եկամտային հարկի մեծության

Մեկ այլ կարևոր միտում է 1000 հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում ուղղակի հարկերի (շահութահարկ և եկամտային հարկ) տեսակարար կշռի նվազումը: 2020թ. առաջին 9 ամիսներին 1000 հարկատուների վճարած հարկերի ընդհանուր մեծության շուրջ 36%-ը կազմել են ուղղակի հարկերը, մինչդեռ նախորդ տարի այս ցուցանիշն ավելի էր՝ 39%: Կարելի է արձանագրել, որ ընթացիկ տարվա տնտեսական ճգնաժամի կարևոր հետևանքներից է նաև ընկերությունների հարկային պարտավորությունների կառուցվածքում ուղղակի հարկատեսակների դերակատարության որոշակի թուլացումը՝ նախորդ երկու տարիներին գրանցված աճի համապատկերում (գծապատկեր 7):



Գծապատկեր 7. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի տեսակարար կշիռը վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում, %

2020թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին 48 ընկերություն վճարել է 1 մլրդ դրամը գերազանցող ուղղակի հարկեր: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում այդպիսի ընկերությունների թիվը 54 էր, իսկ 2017-ին՝ 45:

2020թ. առաջին ինը ամիսների արդյունքներով, 94 ընկերության ուղղակի հարկի վճարումները գերազանցել են 500 մլն դրամը: Նախորդ տարի կար 104 այդպիսի հարկատու, իսկ երկու տարի առաջ՝ 87:

2019թ. հաշվետու ժամանակահատվածում 100 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 481 ընկերություններ, 20-ով պակաս, քան 2019-ին: Սակայն վերստին այս ցուցանիշը 2018-ի համեմատությամբ շարունակում է զգալիորեն բարձր լինել (գծապատկեր 8):



Գծապատկեր 8. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի մեծության

Այսպիսով, 2020թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում 1000 հարկատուների ցանկի առաջին հարյուրակում տեղ զբաղեցրած միջին վիճակագրական ընկերության՝ ՀՀ պետական բյուջե կատարված հարկային վճարումների կազմն ու կառուցվածը զգալիորեն տարբերվում են նախորդ տարիների պատկերից:

Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2020-ի առաջին 3 եռամսյակներին վճարել է 4,3 մլրդ դրամի հարկ (2019-ին՝ 4,7 մլրդ դրամ, 2018-ին՝ 4.2 մլրդ դրամ, 2017-ին՝ 3.6 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 656 մլն դրամ (2019-ին՝ 870 մլն դրամ, 2018-ին՝ 700 մլն դրամ), եկամտային հարկը՝ 763 մլն դրամ (2019-ին՝ 800 մլն դրամ, 2018-ին՝ 630 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 1,76 մլրդ դրամ (2019-ին՝ 1,9 մլրդ դրամ, 2018-ին՝ 1.6 մլրդ դրամ), ակցիզային հարկը՝ 660 մլն դրամ (2019-ին՝ 630 մլն դրամ, 2018-ին՝ 500 մլն դրամ):

Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2020թ. առաջին 9 ամիսների արդյունքներով վճարել է 120 մլն դրամի հարկ (2019-ին՝ 128 մլն դրամ, 2018-ին՝ 104 մլն դրամ, 2017-ին՝ 84 մլն դրամ), շահութահարկը՝ 18 մլն դրամ (2019-ին՝ 19 մլն դրամ, 2018-

ին՝ 14 մլն դրամ), եկամտային հարկը՝ 32 մլն դրամ (2019-ին՝ 38 մլն դրամ, 2018-ին՝ 27 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 60 մլն դրամ՝ նույնքան, որքան 2019-ին (2018-ին՝ 50 մլն դրամ):

Աղյուսակ 1-ում ներկայացված է 1000 հարկատուների ցանկի վերին հորիզոնականներում տեղ զբաղեցրած մի շարք ընկերությունների կողմից հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության դինամիկան 2017-2020թթ. ընթացքում: Աղյուսակում մեծամասնություն են կազմում այն ընկերությունները, որոնք նախորդ տարվա համեմատությամբ ավելի քիչ հարկ են վճարել: Մյուս կողմից, հատուկենտ են այնպիսիք, որոնք հարկային վճարումները 2020-ին պակաս են 2018-ի մակարդակից:

Աղյուսակ 1. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված առանձին ընկերությունների կողմից հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը

Հարկատուի անվանումը	Մլրդ դրամ				*Աճը, %*	
	2017	**2018**	**2019**	**2020**	*2020/ 2019*	*2020/ 2018*
«ԳՐԱՆԴ ՏՈԲԱԿՈ»	22.2	27.7	40.3	36.20	(10.17)	30.69
«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ»	32.2	30.4	33.6	34.90	3.87	14.80
«ՉԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»	13.1	32.8	40.6	31.30	(22.91)	(4.57)
«ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ»	10.2	12.4	12.5	16.30	30.40	31.45
«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ»	9.3	13.2	9.1	14.40	58.24	9.09
«ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ»	7.9	9.3	12.4	12.70	2.42	36.56
«ՖԼԵՇ»	7.9	8.7	10.75	11.95	11.16	37.36
«ՖԻԼԻՊ ՄՈՐՐԻՍ ԱՐՄԵՆԻԱ»	7.7	10.1	9.7	10.50	8.25	3.96
«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ»	7.5	6.9	6.6	10.40	57.58	50.72
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ»	18.8	9.9	10.5	9.00	(14.29)	(9.09)
«ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ»	7.9	8.7	9.3	7.70	(17.20)	(11.49)
«ՄԱՔՍ ՊԵՏՐՈԼ»	2.3	4.2	6.5	6.40	(1.54)	52.38
«ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ»	6.8	4.2	5.8	6.30	8.62	50.00
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»	6	7.1	4.9	5.70	16.33	(19.72)
«ՍԻԹԻ»		0.14	5.7	5.70	-	
«ԱԿՎԻԼՈՆ ԹՐԵՅԴ»	1.1	1.5	8.6	5.50	(36.05)	266.67
«ՅՈՒՔՈՄ»	4.7	4.4	7.4	5.45	(26.35)	23.86
«ԱԴԱՄԻՈՒՄ»	3.4	3.2	4.5	4.96	10.22	55.00
«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «ՏՐԱՆՍԳԱԶ»	4.4	4.6	4.4	4.50	2.27	(2.17)
«ԱԼԵՔՍ ԷՆԴ ՀՈԼԴԻՆԳ»		0.6	4.55	4.40	(3.30)	633.33
«ԱՎԵՐՍ»	3.2	4.2	3.95	4.40	11.39	4.76
ԱԿԲԱ ԲԱՆԿ	3.2	4.98	5.4	4.30	(20.37)	(13.65)
«ԲԱՂՐԱՄՅԱՆ»		0.8	3.4	4.30	26.47	437.50
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	3.2	4.9	6.7	4.20	(37.31)	(14.29)
«ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ՔԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ»	3	4	4.3	4.10	(4.65)	2.50

Հարկատուի անվանումը	Մլրդ դրամ				Աճը, %	
	2017	2018	2019	2020	2020/ 2019	2020/ 2018
«ՍՊԱՅԿԱ»	0.8	2.3	3.5	3.90	11.43	69.57
«ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ»	2.95	3.17	4	3.80	(5.00)	19.87
«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ»	2.8	3	3.9	3.80	(2.56)	26.67
ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ	1.5	1.7	2.3	3.70	60.87	117.65
«ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ»	4	3.87	4.7	3.70	(21.28)	(4.39)
ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ	2.5	3.2	3.9	3.60	(7.69)	12.50
ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ	2.67	3.15	3.91	3.55	(9.21)	12.70
«ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ»	1.7	4.3	4.3	3.30	(23.26)	(23.26)
«ԳՐԱՆԴ ՄԱՍՏԵՐ»	2.5	4.7	4.4	3.30	(25.00)	(29.79)
«ԲԱՐՍԻՍ»	2.5	2.8	3.2	3.30	3.12	17.86
«ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ	2.9	5.9	7.4	3.20	(56.76)	(45.76)
ԱՐԴՇԻՆԲԱՆԿ	4	3.5	3.4	3.20	(5.88)	(8.57)
«ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ»	2.9	2.8	3.4	3.10	(8.82)	10.71
«ԴԵԿՈՐԱ-ԳՐՈՒՊ»	1.5	1.7	2.7	3.10	14.81	82.35
«ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ»	3.1	5.1	2.6	3.00	15.38	(41.18)
ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ	1.9	2.8	2.9	3.00	3.45	7.14
ՍԱՍ-ԳՐՈՒՊ	1.5	2.12	3.04	2.84	(6.58)	33.96
«ՍԼԱՎ ԳՐՈՒՊ»	1.8	1.8	2.42	2.25	(7.02)	25.00
«ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏ»	0.59	1.05	1.52	2.00	31.58	90.48
«ՌՈՍՆԵՖՏ- ԱՐՄԵՆԻԱ»	0.66	0.9	1.17	0.50	(57.26)	(44.44)
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ	1.4	2	2.51	2.23	(11.16)	11.50
ՄԵԳԱ ՖՈՒԴ	0.7	0.9	1.4	0.80	(42.86)	(11.11)
ՓՐԻԹԻ ՈՒԵՅ	0.9	1.3	1.65	1.51	(8.48)	16.15
ՍՈՎՌԱՆՈ	1.3	1.15	1.7	1.68	(1.18)	46.09
ԱՎԱՆԳԱՐԴ ՄՈԹՈՐՍ	0.9	1	1.9	1.58	(16.84)	58.00
ԴԵՐԺԱՎԱ-Ս	1.5	1.9	2.5	2.00	(20.00)	5.26
ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ	1.7	2.1	2.8	1.94	(30.71)	(7.62)
«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ»	1.4	1.4	2.1	1.60	(23.81)	14.29
«ԱԹԵՆՔ»	1.3	1.4	1.9	2.14	12.63	52.86
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	1.4	1.6	1.9	1.66	(12.63)	3.75
«ՋԵՐՄՈՒԿ ԳՐՈՒՊ»	1	0.9	1.9	1.10	(42.11)	22.22
Ընդամենը ըստ դիտարկվող հարկատուների	244.27	294.43	362.4	345.94	(4.53)	17.49

1000 հարկատուների ցանկում ներառված կազմակերպությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը 2020թ. առաջին 9 ամիսների արդյունքներով զգալի ծավալային և կառուցվածքային փոփոխություններ է արձանագրել՝ նախորդ տարիների նույն ժամանակահատվածի համեմատությամբ.

- ✓ վճարված հարկերի ընդհանուր մեծությունը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 9,4%-ով,
- ✓ 100 խոշորագույն հարկատուների կողմից վճարվել է 434 մլրդ դրամի հարկ, որը 34 մլրդ դրամով պակաս է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից, սակայն 17 մլրդ դրամով գերազանցում է 2018թ. մակարդակը,
- ✓ 1000 հարկատուների ցանկում ներառված 100 ամենափոքր ընկերությունները 2020-ի 9 ամիսներին վճարել են 12.0 մլրդ դրամ կամ նախորդ տարվա հունվար-սեպտեմբեր ամիսների համեմատությամբ՝ 0.8 մլրդ դրամով պակաս (2018-ի համեմատությամբ՝ 1.6 մլրդ դրամով ավելի),
- ✓ 1000 հարկատուների ցանկում ներառված ընկերությունների վճարած հարկերի անհամաչափության աստիճանի որոշակի աճ է արձանագրվել: Ցանկի ամենախոշոր և ամենափոքր 10 ընկերությունների վճարած հարկերի ընդհանուր մեծության հարաբերակցությունը 2020թ. առաջին 9 ամիսներին կազմել է 163 անգամ, նախորդ տարվա 158 և 2018-ի 168 անգամի համեմատությամբ: Ամենախոշոր և ամենափոքր 100 ընկերությունների պարագայում նույն հարաբերակցությունը 2020-ին կազմել է 36, փոքր-ինչ ցածր է նախորդ տարվա արդյունքից, և զգալիորեն ցածր է 2017 և 2018թթ. մակարդակից,
- ✓ 2020թ. հունվար-սեպտեմբերի արդյունքներով ՀՀ-ում գործել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր վճարած 130 ընկերություն: Նախորդ տարում այդպիսի ընկերությունների թիվը 137 էր, 2018-ին՝ 121, 2017-ին՝ 110,
- ✓ 2020թ. առաջին 9 ամիսներին 500 մլն դրամից ավելի հարկեր վճարած ընկերությունների թիվը 257 է, 2019-ին եղել է 256, 2018-ին՝ 240, 2017-ին՝ 201,
- ✓ 2020թ. առաջին 9 ամիսներին 192 ընկերության վճարած շահութահարկի մեծությունը գերազանցել է 100 մլն դրամը: Նախորդ տարվա համեմատ այդպիսի ընկերությունների թիվը պակասել է 33-ով: 2018-ին կար այդպիսի 165 ընկերություն:

  Եկամտային հարկի պարագայում 100 մլն դրամի շեմը 2020թ. գերազանցել է 298 ընկերություն՝ նույնքան, որքան նախորդ տարի, 2018-ին՝ 236:
- ✓ Մեկ այլ կարևոր միտում է 1000 հարկատուների ցանկում ընկդգրկված ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր

մեծության կառուցվածքում ուղղակի հարկերի (շահութահարկ և եկամտային հարկ) տեսակարար կշռի որոշակի նվազումը: 2020թ. առաջին 9 ամիսներին 1000 հարկատուների վճարած հարկերի ընդհանուր մեծության 36%-ը կազմել են ուղղակի հարկերը: Նախորդ տարի այս ցուցանիշը շուրջ 39% էր, 2018-ին՝ 34,2%:

- ✓ 2020թ. հունվար-սեպտեմբերին 100 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 461 ընկերություններ, 2019-ին ՀՀ-ում գործել է այդպիսի 481 ընկերություն, 2018-ին՝ 381, 2017-ին՝ 314 ընկերություն,
- ✓ 2020թ. առաջին 9 ամիսներին 1000 հարկատուների ցանկի առաջին 100 ընկերությունները պետական բյուջե են վճարել միջինում (1 ընկերության հաշվով) 4,3 մլրդ դրամի հարկ (2019-ին՝ 4,7 մլրդ դրամ, 2018-ին՝ 4.2 մլրդ դրամ, 2017-ին՝ 3.6 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 656 մլն դրամ (2019-ին՝ 870 մլն դրամ, 2018-ին՝ 700 մլն դրամ), եկամտային հարկը՝ 763 մլն դրամ (2019-ին՝ 800 մլն դրամ, 2018-ին՝ 630 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 1,76 մլրդ դրամ (2019-ին՝ 1,9 մլրդ դրամ, 2018-ին՝ 1.6 մլրդ դրամ), ակցիզային հարկը՝ 660 մլն դրամ (2019-ին՝ 630 մլն դրամ, 2018-ին՝ 500 մլն դրամ),

1000 հարկատուների ցանկի վերին հորիզոնականներում տեղ զբաղեցրած, հանրային որոշակի հետաքրքրություն ներկայացնող ընկերությունների մի ստվար հատված 2020թ. հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազեցրել է պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը (աղյուսակ 1, դեղինով նշված վանդակներ): Այնուհանդերձ, նույնիսկ անկման պայմաններում, դիտարկվող ընկերությունների կատարած հարկային վճարումները էականորեն բարձր են 2017 և 2018թվականների արդյունքներից: